



առիթուն մը զսպել անկարելի կ'ըլլայ .  
Յատուկ յօդուածի մը կամ յօդուած-  
ներու նիւթ ընելու առաջադրութիւնը ը-  
նելով հանդերձ, առ այժմ իբրև նօթ մը,  
իրողութիւնը պատմենք իր ամենապարզ վե-  
ճակին մէջ :

Հանգանակիչները ոսկերիներու շու-  
կան են — Խանը Խալիլ — Իրենց հետը ու-  
նին Տիար Մ. Մանուկեան, ծանօթ մէկը՝ որ  
իրենց պիտի առաջնորդէ նիւթական կար-  
գութեան տէր գոհարարականներուն, որոց-  
մէ մէկը կը ներկայացուի Յովհաննէս Եֆ-  
նակեանի . երբեմն անհրաժեշտ անդամ Գա-  
ղարական ժողովոյ, իսկ տարբ տարիներէ ի  
վեր ազգային ներսփոխան :

Բացատրութիւնը կ'սկսի .  
Հանգանակիչները — Գուր քալ հանձ-  
նէք մասնակցել հանգանակութեան մը, որ  
Սրբանոցի մը նիւթական կարգութեան հետ  
գործ ունի Միշտ կոկիկ ու ընտրուած բա-  
ւերով .  
Յ. Նախնուխ . — Պէն պէօլէ շէյլէրէ  
բարա վերմէմ . . . .

Հանգանակիչները . — Գուր կարողու-  
թեան տէր էք . ազգային ժողովներու ան-  
դամ . պէտք է որ լաւագոյն օրինակը միշտ  
ձեռքէ տրուի են .  
Յ. Նախնուխ . — Չաթէն սիզէ սէօլէ-  
տիմ թի, պէն պէօլէ շէյլէրէ բարա վեր-  
մէմ, պէնիմ տէ պեր թաղըմ պաղաճաք  
ստամբուլըմ վար տըր են :

Հանգանակիչները . — Կր պիզեն ու կը  
ընդլայնեն իրենց բացատրութիւնները շար-  
ժեղու համար սիրտը, մեր ազգային մնայուն  
երեսփոխանին .  
Յ. Նախնուխ . — Իրիստափոր Գոլում-  
պոսի Ամերիկան գտնելու ատեն զգացած  
ուրախութեան պէս, քիտա մը քրած ըլ-  
լալու գոհունակութեամբ, պէն Քեյլանըմ .  
վէստէլում . կ'ըսէ ու մէլէն կ'ելլէ .  
Տիար Յ. Օհանեան մէկ երկու բառով  
պէտք եղած դասը կուտայ լիէն, սակայն  
մենք ալ երբ եզրապատի Տորիզոնին շրջանը  
կատարելու ատեն Քեյլանի կամ Քեյլանի-  
նու հանդիպած կ'ըլլանք, այդ մեզի վերջ  
չի պատճառեր . Իկայն կը ցուինք որ Յա-  
մարիւն էֆէնի քըլճեան, իր առաջին  
անգամը ըլլալով ըրած բարեգործական ար-  
չաւանքին մէջ կը հանդիպի Քեյլանի մը,  
որ թերեւս յուսահատեցնէ զինքը, և ուրիշ  
անգամներ բարեգործելէ զգուշանալու ա-  
ռիթ մտայ .

Սակայն փափաքելի էր որ երբէք այդ-  
պէս չ'մտածէր Գըլճեան էֆէնի, և ամէն  
ազգային ու բարեգործական ձեռնարկներու  
առթիւ իր հզօր օժանդակութիւնը նստիլով  
չ'զլանար .

Գահիրէի ազգայնաց կեանքովը իշտ  
զբաղելու պատրաստ է ԱրԿՈՍ . իր ստուե-  
րը միշտ կը շրջի զանոնք շրջապատող հա-  
րիզոնին ամէն կողմերը . և չ'վստիմք, եթէ  
հոն Քեյլանի-րէ կարգուած գումարտակ-  
ներու ալ հանդիպի . . . .

### ՄՕՍՅԵԱՏ Ի ԴԻՄՍԿԸ ԿԸ ՊԼԱՏԻՈՒ

«Արշալոյս»-ի ընթերցողները անշուշտ կը  
յիշեն զեռ . սեղիս «Մօսյեան» արբը թերթին  
ֆրանսերէն տպիւն այն հայտնաց յօդուածնե-  
րու շարքը՝ որոցմով փաթեցողութեամբ Ալի Ենուտի  
ուսուցիչ վարկաբեկ ընկն Եզրպոստ և ընդհանուր  
ստամբուլ արտասահման ապստամբած շայ գող-  
թականները .  
Եզրպոստի հայութիւնը բուսական յուզ-  
ուեցած այդ Համախառնապատան թերթին մղած  
պայքարէն և մեր համակրելի բարեկամներէն  
Տիար Յ. Ենուտեան ժամանակին, իր ջրուտ  
գրչովը արդէն պէտք եղած պատասխանները  
տուաւ «Մօսյեան»-ին՝ սրամիտ ակնարկներով  
համեմելով իր կարգ մը յօդուածները .  
Գահիրէի Հայութիւնն ենթադրեց թէ համ-  
խառնութեան օրկարք — այդպէս կ'անուանէ  
Շէյն Ալի Ենուտի իր թերթը — իր կողմէն հը-  
րատարակած է այդ յօդուածները և գրուած  
ֆրանսերէնին տարիակ տնն ալ կուգար կաս-  
կածները գորացնելու : Սակայն վերջին « Բթօ  
Արմէնիա »-ն հիմն — ի վեր տապալելով այդ են-

Թարգմանիչները ակնյայտի ցոյց կուտայ թէ՛  
ի՛նչ բարձր շրջանակներէ ստացած է «Մօսյեան»  
էր հրատմանները :

Գրեմէլի հայաստանեայց Համագործակց-  
ութեան անդամ Գահիրէ, Սուլթանը անոր յարաջ  
բերելիք հայ տառապանքին հանդէպ համակ-  
րական հոսանքը հակադրելու համար, գերա-  
զոյն ճիշդեով, եւրոպական կաշառակեր մամու-  
լին միջոցաւ ուղեց Հայերը իբր վտանգաւոր  
խոտորաններ, և անիշխանականներ ցոյց տալ,  
ջանալով ստով կատարութեանը ձեռքը զէնք  
մը առ մեզի հալածելու համար :

Սուլթանին այդ դաւաճան ծրագիրը ջուրը  
ինկաւ . բայց և այնպէս մէկ քանի ստոր և  
կաշառակուր թերթեր ստիժը չիտախոցին Հա-  
յերուն դէմ հաշիւու .

Բնական է որ այդ պահուն Սուլթանին  
վարկան թերթերը ինչպէս Սուլթան, Բեքթե-  
լոյս, Բօսթ և ինչ . բուն պայքար մը կը մղէին  
Հայաց պէմ Գրեմէլի Համագործակցութեան  
թեան գատապարտելու համար, ինչպէս որ Բթօ  
Արմէնիան ի վեր կը շանէ թէ այդ անարը թեր-  
թերը Պօլս խմբագրուած համաման շրջաբե-  
րականներ հրատարակեցին և ս'վ գարմանք,  
այդ երեք թերթերուն հայտնաց յօդուածները  
առանց ստորագրելու մը փոփոխման բառ առ բառ  
իբրբաւ կը նմանէին, ինչ որ թերթական ապու-  
շութեան և աւանակութեան փայլուն մէկ ա-  
պացոյցը կուտայ :

Սակայն ինչորոյն ամենէն ծիծաղաշարժ,  
ամենէն piquant կողմը սա է որ գտնուեցաւ ան-  
կողմնակալ, արգարաւէր թերթ մը, Սթօբուլի  
(Շուէտ) Սվեդեբուս Տայպարթը, որն որ իր 18  
Օգոստոսի թիւին մէջ հրատարակեց Եզրպոստը  
բացարձակ շրջաբերականը հետեւեալ նախաբա-  
նով .

«Տեղուց Օսմանեան Դեպարտամենտը  
հրատարակութեան ինքնակամ մեզի որչա՞ծ է  
հետեւեալ շրջաբերականը՝ որուն քարգանձու-  
թիւնը ստորեւ կը հրատարակեմք »

Կ'երեւակայէք յառաջ եկած խաղաղութիւնը  
. . . Սուլթանը իր բերանով մերկապարանոց կը  
խայտատակուի և բաց է ի բաց երեւան կ'ելլէ  
թէ ինքն է մեզի անիշխանականներ անուանո-  
ղը՝ է՛հ . հալածուած անմեղ գաղտնիներ ան-  
ուանելու չէ՛ ա՛ :

Գահիրէի Մօսյեանին հրատարակածն այլ բառ  
առ բառ այդ վերոյիշեալ վարկան թերթերուն  
գրած շրջաբերականն էր, մենք այժմ պէտք է  
իրեն տեղ ընենք թէ՛ իր ըրածը պարզապէս  
Սուրի հարուած մըն էր Գուրի մէջ (Un coup  
d'épée dans l'eau) . . . իսկ զ՞ հարպարակագիր . . .  
Բնթերցողները կրնան իրենց թերթահաւա-  
տութիւնը փարատելու համար բողոքաւոր  
Մօսյեանի և այդ թերթերուն յօդուածները՝ «Բթօ  
Արմէնիան» վերջին թիւին մէջ :

Եւ երեւակայել թէ Մօսյեանը պատժել տալ  
անխուսափելի կը դառնար . . . կ'արժէ ր արդեօք  
որ հայ հայրենասէրները չ'ստիպեն Սուլթանին  
հաւատարմի շնորհներէն մէկուն հետ . . .

Ո՛հ, ըստ իս ո՛չ :

ԿԵՆՈՆ

Գահիրէ 26/10/1902

### ՊԵՏԵՐՊՈՒՆԻՆԻ ԱՄԵՐԻԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ

Ստացանք Վազգէն-Երզրանը, բանաս-  
տեղութիւններու, ազգային, յեղափոխական,  
սիրային և ժողովրդական երգերու ձօն հաւա-  
քածուն, որուն տնտեսներ կը սպասէր հայ հա-  
տարակութիւնը :

600 մեծադիր երեսներէ բաղկացած, ըն-  
տիր թուղթի վրայ, գեղեցիկ պատկերներով  
զարդարուն սոյն երգարանը՝ կուտայ մեծ պա-  
կաս մը լրացնելու մեր ազգային գրականու-  
թեան մէջ :

Կ'ինն է, ճամբու ծախքով 1 և կէս տղար  
Գինը փափաքողք պէտք է դիմին

K. KHORANIAN

379 P. O. Box, Lynn Mass. (U. S. A.)

Ձեռք կը ծախուի Ամերիկա «Հայրենիք»-ի  
պարտանքին մէջ, և ի Գահիրէ «Արշալոյս»-ի  
խմբագրութեան քով :

Արաստամանի համար 7 ֆրանք  
Պարակաստանի » 6 »

Մանոթ . — Սոյն երգարանը որչա՞ք որ քա-  
նի մը անմարտ անհատական ջանքերով հրա-  
պարակ կուտ է, սակայն, ինչպէս զբքին կըց-  
ուած յայտարարութիւնները կը ցուցնեն, ամ-  
բողջ հաստիճը յատկացուած է զուտ բարեխիբա-  
կան գործի մը :

# ԴԵՊԻ ԻՍՄԱՅԻԼԵՒ

## ԱՄԵՐԻԿԱՆ ԴԵՐՁԱԿԲ ԵՒ ԸՆԿ .

Ամերիկեան Դերձակ և ԸՆԿ . կը յայտարարեն թէ՛ իրենց նախկին բոլոր յաճախոր-  
դաց և թէ՛ ամէն անոնց՝ որոնք կ'ուզեն նոր յաճախորդ ըլլալ . թէ՛ ներկայ Հոկտ. ամսոյ  
10էն սկսեալ պիտի բացուի Իսմայիլիէի պողոտային վրայ Իսպրան քիլիկ սֆի գիմաց, Գը-  
լիւս Ալլամանի տակ, իրենց նոր գերձակի վաճառատունը .  
Ընկերութիւնը ամէն շանք ի գործ դրած է կերպասներու մաքուր ընտրութեան և  
գոյներու ամէնու ճաշակին յարմարութեանը .  
Մեր կարի ու ձեռք մաքրութեան համար, մեր ունեցած յաճախորդներու գոհունակու-  
թիւնը կը բաւէ ապացուցանելու թէ՛ երկու սեռին ալ — արանց և կանանց — հազուադէ-  
բոլոր ճիւղերուն մէջ պատրաստ ենք գոհացնելու ամենէն նրբաճաշակներն անգամ .  
Մէկ անգամ փորձեցէք և պիտի հաստատուէք մեր յայտարարութեան ճշտութիւնը .  
Կը կրկնենք, կերպասի լաւութիւնը, գործի մաքրութիւնը և ճշգրտակութիւնը կա-  
տարեալ է :

### ԳԻՏԱԿԱՆ ԷՋԵՐ

Գաֆէի հումարները կը հայտնաբերեն caffeine  
ալբոյնը որ նշանաւոր հանդիսացած է ալբո-  
լուանի մէջ՝ իւր մէջ ունենալով սակի բո-  
րակածին քան գրիթի մօտաւոր (proximate) բու-  
սական սաքր :

Գաֆէն երբ խնամքով պատրաստուի՝ կը  
ներկայացնէ այժմեան կենցաղին ընտիր և  
Ամերիկեան գրքատիրութիւններէն մինն Ան-  
խըտի կերպով դատապարտել նոր գործածու-  
թիւնը՝ պիտի նկատուէր շատերու կողմէն  
իրբեւ աւելորդ յոգնութեամբ և առիթ վի-  
պիտի ընծայէր կապուածանց թէ՛ գատապար-  
տող գաֆէի գործածութեան հակառակող դա-  
ղափարածաւ ընկերութեան մը կողմակիցնե-  
րէն մին է :

Սոյն յատկութիւնները որոնց համար  
գաֆէն կը յարգուի ընդհանրապէս՝ եւսպա-  
տիկ են . — Անիկա (1) կը նուազեցնէ հիւթան-  
ջատութիւնը մարմնոյ հիւսուածք մէջ . այնպէս  
որ մարդու մը համար կարելի կ'ըլլայ ի գրիթի  
հանել իւր գործը աւելի նուազ ստուգով և  
աւելի նուազ յոգնութեամբ . և երբ գործածուի  
չափաւորութեամբ՝ անիկա (2) կուտայ գրգռում  
մը մտային գործունէութեան, և (3) ամոքիչ  
և հանգարարի է զայն գրուածութեան :

Աւելի խորով իբրեւ ըմպելիք՝ երբ գա-  
ֆէն գործածուի չափաւորութեամբ՝ կ'օգնէ մար-  
տողութեան, կ'աւելցնէ մտային գործունէու-  
թիւնը, կը խրախուսէ և կը յարաջացնէ ա-  
ղիքներու սողնակայն շարժումները, կամօք և  
կը հանդարտեցնէ յոգնութեան և անօթութեան  
զգացողութիւնները, կը նուազեցնէ հիւթան-  
ջատութիւնը և հետեւաբար մարմնոյ հիւսու-  
ծոց վատնումը :

Երբ չափազանցօրէն գործածուի՝ գաֆէն  
կը խանգարէ մարտողութիւնը, և յառաջ կը բե-  
րէ ջղային գրուածութեան մէջ կենսական գործու-  
ծելութեան անկանոնութիւններ, որք երեւան  
կոնգան իբրև զլիտեցաւ, զլիտե պտոյս,  
մտաւորական խանցախիթութիւն, որք բա-  
բախում, որք շուտով կը դադրին, և կ'անհե-  
տանան, և թէ՛ գաֆէի գործածութիւնը դադրե-  
ցուցնէ :

Գնատութիւնը և մատարական գործութեան  
զգրգռում մը ձեռք կը բերուի գաֆէի գոր-  
ծածութեամբ՝ հասարակօրէն գիտցուած ճշմար-  
տութիւն մըն է : Գրականութեամբ զբաղող շատ  
մը մարդիկ, և կանայք, և ծանր ու կարեւոր  
ստեղծարական ձեռնարկութեան մէջ գտնուող  
մարդիկ շարունակաբար կը գործածեն գաֆէ՛  
մտաւոր գրգռում մը ձեռք բերելու, և իրենց  
թուլցած ուժերը նորոգելու համար : Գաֆէի  
այսպէս չարաբար կերպով գործածութիւնը՝ գաղ-  
տագողի կերպով մը եթէ արագութեամբ կ'ա-  
ռաջնորդէ ուղեղի և սղնձածուծի կերպուններու  
սպասման սարքեր աստիճաններուն, մասնա-  
ւանդ անոնց համար որոնք շուտով ազդուելու  
միտումը ունին այս տեսակ գրգռումներէն :

Հասարակօրէն ընդունուած կարծիքը սա է  
թէ՛ գաֆէն կրնայ կերպուրի տեղը բռնել, կամ  
գործելու կարողութիւնը աւելցնել տանց մար-  
մնոյ հիւսուածոց սպասում մը զոյացնելու,  
և թէ՛ անիկա չունի ու է վնասակար յառ-  
կութիւն, և հետեւաբար կրնայ գործածուիլ  
ad libitum, բոլորովին սխալ է :

Գաֆէի ստորեւ ինչ շարունակական գոր-  
ծածութիւնը մինչև իսկ չարաւորութեամբ՝ ա-  
նոնց կողմէն որոնք զիւրին կերպով կ'աղ-  
բուին անոր ազդեցութեան, անայսպէս  
կ'առաջնորդէ ջղային գրուածութեան կենսական  
և կենսական գործունէութեան անկարգու-  
թեանց, և զժողովրդականութեան :

Գաֆէամոլութեան զա՛ւ եղողները ընդհան-  
րապէս կը գանգատին հետեւեալ արտասիրու-  
թիւն, որոնք քիչ շատ զօրաւոր կերպով յատ-

կանչուած են, և կը սեռունին փոփոխուող  
միաւորութիւններով — ընդհանուն զլիտե ցաւ  
մը և ջղային գրուածութեան չափազանց զգայնու-  
թիւն, երկիւղ կամ կոպտած՝ չզիտցուած մա-  
տալուտ նեղութեան մը նկատմամբ, մտաւո-  
րական ճնշում և գիւրգրգռութիւն, քնատու-  
թիւն կամ խռովեալ քուն, գէշ երազներ և  
քուններ մէկէն ի մէկ արթննալ՝ առատ քրտին-  
քի մէջ, պատահական կամ յաճախ տեղի ու-  
նեցող զլիտե պտոյս, կազմութեան ընդհանուր  
գործում և նուազում գնդերային գործութեան,  
ճնշում որ կը զգացուի ստամոքսի վրայ, սրտի  
բարձրում, անսիրտութիւն, կազի յաճախ  
զգայնում, և որովայնագրութիւն : Հաւաքումն  
այն արտասիրութեան որք յաճախ զոգնակցեալ կը  
գտնուին, են՝ ընդհանուր ջղային զգայնու-  
թիւն, գողում, զլիտե պտոյս, անհանգիստ  
քուն, որքի բարձրում, կազի զգայնում, և  
որովայնագրութիւն :

Հինցած գաֆէամոլութեան բոլոր արտա-  
սիրութիւնը արդիւնք են միջամտութեան անդա-  
տութեան հետ այն ըջիջներուն՝ որք կը պատ-  
կանին ուղեղներու և որդաբարայնի միջակայ  
գրուածութեան : Բնթերցող անհատութեան սոցի-  
պակապութիւնը յարազ կուգայ չափազանց գըր-  
տուէն և auto-toxemia էն՝ գաֆէի շարունա-  
կական և չափազանց գործածութեան պատճա-  
ռաւ, և մտաւորապէս կը նմանին հինցած ալ-  
քոլոմոլութեան արտասիրութեան :

ՏՕԻԹ . Ս . Վ . ԵՋՁԿԻՆԻՆԻԱՆ  
Աղկաք . 30 Հոկտ . 1902

### Ս. Չ. Ա. Ր. Ա. Ր. Ո. Ի. Թ. Ի. Ե.

Վարժ գրաչարի մը պէտքը կայ, գո-  
հացուցիչ ամսականով, գիմել Արշալոյսի  
խմբագրութեան .

### ՀԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԻ ՄԷԿԸ

Աղէքանդրոյ Երաբարութեամբ Փինիկի  
Պ. Ս. Բիւրատը, անշուշտ մասնաւոր գո-  
հունակութեան մը զգացած է իր թերթին  
մէջ ընդունելով Օհանեան Թաշանեան և ու-  
րիշներէ ստորագրուած նամակներ Օ՛հ . առ  
նուազն 20-30 վկաներու պէտքը կայ թէ՛ Եւ-  
անոնք նամակ կամ յօդուած անուանելու  
համար — Թողունք այս վերջինը ստորագրող  
Օհանեան թաշանեան ինքզինքը ներկայացնել  
ուզել է իրեն ստորագրած իր բառերովը,  
սակայն բուն զաւեչական կէտը այն է որ  
փինիկի Պարոն Ս. Բիւրատը չարչիս գոհու-  
նակութիւն մը փնտաւել կ'ուզէ հոն և Օհան-  
եան Թաշանեան զատ ուրիշ սպուշ մը չէր  
կարող գտնել, այդ իրեն չափ լիընձակ բա-  
ւերը ստորագրել տալու համար : Մենք այդ-  
րեկնախոյ ներկին խմբագրութիւն ընելը սոր-  
վեցնելու համար, շատերէն միայն մէկ օ-  
րինակ պիտի տանք, որպէսզի ուրիշանգամ  
այդպէս կոչանոցներուն մէջ չ'տապալակելով  
քիչ մը խմբագրի պաշտոնը վեր բռնելու  
ջանայ, եթէ երբէք այդ անպիտանէն այդ-  
գէպի բարձրը նայող ձգտումը կարելի է  
սպասել և յոսալ :

Հետեւեալ նամակը և սորը նման շատ  
մը ուրիշներ ալ մենք ստացած ենք թուա-  
կանէս վեց ամիս և աւելի առաջ թուա-  
կաններով, սակայն նկատելով որ ամիս-  
կիւ է անոնց հրատարակութիւնը, մէկդի  
գրած ենք :



